

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ
ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Հաշվի առնելով, որ Աբովյան համայնքում առկա են համայնքային սեփականություն համարվող բնակարաններ և նախկին հանրակացարանային սենյակներ, այդ անշարժ գույքի կառավարման և պահպանման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել տվյալ բակարաններին և նախկին հանրակացարանային սենյակներին փաստացի տիրապետող անձանց, ինչպես նաև բնակարանի կարիք ունեցող քաղաքացիներին վարձակալության իրավունքով տրամադրել Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող հետևյալ անշարժ գույքը՝ 21 բնակարանները (որից 15-ը նախկին հանրակացարանների սենյակներ)՝ 567.0 քմ մակերեսով, դրանով իսկ կարգավորելով անշարժ գույքի հետ կապված իրավահարաբերությունները և դրանց հետ կապված գործարքների կնքման արդյունավետությունը:

Աբովյան համայնքի սեփականություն համարվող անշարժ գույքը վարձակալության իրավունքով տրամադրելու մասին Աբովյան համայնքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում, ինչպես նաև Աբովյան համայնքի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ